

— Բայց բարեկամ . . .

— Դուն գիտես, կ'ըսէ փեսացուն սրտնեղած, ես կարող եմ ու-
րեւ քժիշչէ մը առնել վկայագիրը. բայց քեզ սիրելուս և ճանչնալուս
համար, քեզի դիմեցի:

— Բայց ձեր ապագայ կողակիցը, սրտի հիւանդութիւն ունի —
կամ — զուք թոքերու տկարութիւն ունիք — կամ — ձեր այնինչ հի-
ւանդութիւնը տակաւին բաւարար դարմանումի չէ ենթարկուած ևն.
ևն . . .

Մաիկ ընողը «Վ: Ու առանց գիտութեան կամքին, պսակը կ'ըլ-
լայ ընդհանրապէս իր ցաւալի հետեւանքներով:

Ընթերցողը ինծի հետ արդէն կ'ընդնշմարէ սոյն օրինական ձե-
ւակերպութեան բոլոր պակասաւորութիւններն ու անպատեհութիւն-
ները, զորս կարելի է ամփոփել հետեւեալ կերպով: Ա. ամուսնացող-
ները բժշկական քննութեան անհրաժեշտութիւնը չեն հասկցած: Բ.
ծնողներ և ազգ. իշխանութիւններ օրինական պարզ ձեւակերպու-
թիւն մը կը նկատեն զայն և ըստ այնմ կը վերաբերուին Դ. բժիշ-
կին ոչ ժամանակ և ոչ միջոց կը տրուի, այդ քննութիւնը պաղա-
րիւնութեամբ և գիտական տուեալներու համեմատ կատարելու: Դ.
այդ քննութիւնը կը պահանջուի վերջին զրահուն միայն, այնպէս որ
աննպաստ եղած պարագային թէ՝ բժշկը. թէ ամուսնացողները և
թէ շահագրգոռուղ կողմերը կը մատնուին տեսակ մը անել կացու-
թեան և այն ատեն տեղի կ'ունենայ ակամայ ու համենեղ. կարգա-
դրութիւններ ուր գիտութեան ձայնը կը մնայ անլսելի:

Նախ քան ամուսնութիւն, երկու սեռի ամիատներ պէտք է ըս-
տանան որոշ չափով զարգացում, դաստիարակութիւն, ամուսնական
կեանքի ընկերային եւ առողջապահական պայմաններու մասին: Ա-
մուսնանակէ առաջ, պատկան մարմինները, որոնք իշխանութիւն
ունին արտօնութիւն տալու, պիտի պահանջեն ո՛չ թէ միայն առող-
ջութեան՝ այլ ամուսնական կեանքի մասին ակնարկուած զարգացու-
մի վկայագիր, կը նշանակէ որ մարդիկ դէպի ամուսնական կեանք
պիտի դիմեն պատրաստուած եւ գիտակցութեամբ:

Միտիլի

Բժ. Ն. ՏէՅԻՐՄէՆՃԵԱՆ

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԲԱՄԻՒՑԵՐԸ

Ինքնաշարժը՝ անտարակոյս, գեղեցիկ եւ թանկագին ինարք
մըն է եւ օրէ օր կը կատարելագործուի ու կը յառաջդիմէ ի վնաս...
ինտիոտն գացողին: Հաշիւ եղած է օր մինչ 1900 — 1910 շրջանին՝
մէկ տարուան մէջ 1000 հոգիի վրայ մէկ մարդ ինքնաշարժի տակ
կը ճգմուշը, 1922ին իազարի վրայ 12 մարդ ճգմուած է, իսկ անց-
եալ տարի, ընդամէնը 1500 մարդ մեռած են, առանց իաշուելու
իաշմանդամները՝ ներկայիս կրիբէն վերջ ամէնէն շատ մահացնող
օդիւանդութիւնը՝ ինքնաշարժն է: